



MEMBER



ԾԵՄԱՐԱՆ  
LYCEUM

# ԿՐՏԱԵՐ ԴՊՐՈՅ ԼԵԶԿԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաստատված 01.01.2023





## ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Շիրակացու ճեմարանի կրտսեր դպրոց

*Այս փաստաթուղթը սահմանում է դպրոցում լեզվի ուսուցման և ուսումնառության փիլիսոփայությունը, հիմնական մոտեցումներն ու համաձայնությունները:*

#### **1. Լեզվի ուսուցման գաղափարախոսությունը**

- 1.1. Լեզվի ուսուցումը նպաստում է բազմալեզու միջավայրում հաղորդակցվելու ճանապարհով սովորողների մեջ մշակութային բազմազանության նկատմամբ հանդուրժողականության ու հարգանքի ձևավորմանը:
- 1.2. Լեզուն դիտվում է որպես մտածողության, ճանաչողության գործիք, որի միջոցով հնարավոր է դառնում գրավոր և բանավոր ինքնաարտահայտումը, մեծերի, փոքրերի ու հասակակիցների հետ արդյունավետ հաղորդակցումն ու համագործակցությունը:
- 1.3. Ուսուցման գործընթացը միաժամանակ ներառում է.
  - **լեզվի ուսուցում**, երբ սովորողները լեզուն կիրառում են առօրյա կյանքում՝ լսելու և ուրիշների հետ հաղորդակցվելու նպատակով,
  - **ուսուցում լեզվի մասին**, երբ սովորողները հասկանում են՝ ինչպես է աշխատում, զարգանում լեզուն,
  - **ուսուցում լեզվի միջոցով**, երբ սովորողները լեզուն օգտագործում են որպես մտածելու, տեղեկատվությունը լսելու, քննարկելու և վերլուծելու գործիք (Halliday 1980):
- 1.4. Յուրաքանչյուր ուսուցիչ լեզվի ուսուցիչ է և պատասխանատվություն է կրում սովորողների լեզվական կարողությունների ու լեզվի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման հարցում:
- 1.5. Լեզվի ուսուցումն օգնում է ուսուցիչներին ավելի լավ հասկանալու յուրաքանչյուր սովորողի պահանջները և բարելավելու ուսուցման որակը:
- 1.6. Լեզվի ուսուցումն իրականացվում է ողջ կյանքի ընթացքում:

#### **2. Հիմնական համաձայնությունները լեզվի ուսուցման հարցում**

- 2.1. Լեզուների ուսուցումը տարրական դպրոցում իրականացվում է վերառարկայական թեմաների շրջանակներում, ինչպես նաև դրանց շրջանակներից դուրս, ինչը հնարավորություն է տալիս հաշվի առնել սովորողների առաջընթացը և ապահովել աշխատանքի շարունակականությունը:
- 2.2. Ռուսերենի և անգլերենի (ֆրանսերենի կամ գերմաներենի), ինչպես նաև մյուս լեզուների ուսումնական ծրագրերն ու նյութերը մշակվում են միասնական մոտեցումներով՝ մեկը մյուսի հետ ունեցած կապերի հաշվառմամբ:
- 2.3. Ճեմարանի կողմից լեզուների ուսուցման բովանդակությունը մշակվում է ՀՀ պետական չափորոշչի, լեզուների պետական ուսումնական ծրագրերի և ՄԲ ԿԴ ծրագրի «Language Scope and Sequence» փաստաթղթերի պահանջների ինտեգրմամբ՝ հաշվի առնելով ուսումնական բովանդակության պլանավորման ուղղահայաց և հորիզոնական սկզբունքը:
- 2.4. Լեզվի ուսուցման պլանավորումը համագործակցային գործընթաց է, որն ընդգրկում է ուսուցիչներին, սովորողներին և ծնողներին:
- 2.5. Լեզվի ուսուցման բովանդակության պլանավորումը ներառում է՝
- Ակնկալիքների/պատկերացումների սահմանում, մասնավորապես՝ մանկակրթարանի, կրտսեր և միջին դպրոցների միջև կապերի առնչությամբ:
  - Նպատակների/խնդիրների սահմանում՝ համաձայն ՀՀ պետական չափորոշչի, ուսումնական ծրագրերի, ՄԲ ԿԴ ծրագրի պահանջների՝ հիմնված սովորողների անհատական կարիքների վրա:
  - Միջառարկայական կապերի ապահովում և հասկացությունների վրա հիմնված ուսումնառության մոտեցումների ձևակերպում:
  - Գնահատման չափանիշների հստակեցում՝ ուշադրություն դարձնելով ավելի շատ սովորողների ձեռքբերումներին, քան բացթողումներին:
- 2.6. Լեզվի ուսուցումը ներառում է նաև ինքնուրույն ուսուցման պլանավորումը, այդ թվում՝
- սեփական գիտելիքների՝ տվյալ պահի մակարդակի մասին սովորողի իրազեկում,
  - իրական նպատակների ինքնուրույն որոշում,
  - նյութերի ընտրություն,
  - ինքնագնահատում,
  - լեզվական կարողությունների ինքնազարգացում:
- 2.7. Լեզվի ուսուցումն իրականացվում է տարբերակված մոտեցմամբ, հաշվի են առնվում սովորողների անհատական կարիքները, ինչպես նաև ուսումնառության ոճերը:
- 2.8. Լեզուներ սովորելու համար բոլոր սաների համար ստեղծվում են հավասար պայմաններ:
- 2.9. Լեզվի ուսուցումն իրականացվում է ուսուցման բազմազան գործնական մեթոդների ու հնարների կիրառմամբ (տարբերակված ընթերցանություն, ձայնագրությունների ունկնդրում և ստեղծում, գրաֆիկների, աղյուսակների

կազմում և այլն), անհատական և խմբային աշխատանքի միջոցով, տարբեր աղբյուրների, ՏՀՏ միջոցների օգտագործմամբ:

2.10. Սովորողների ինքնաճանաչողության և անհատական կարիքների համատեքստում ուսուցիչները դուրս են բերում սովորողների լեզուների իմացության նկարագիրը, որպեսզի նրանց հետաքրքրությունների և ուժեղ կողմերի վրա հիմնվելով՝ նպաստեն լեզուների զարգացմանը:

2.11. Սովորողները ուսուցիչներից, ընկերներից գրավոր և բանավոր հետադարձ կապ են ստանում իրենց կողմից իրականացված լեզվական գործունեության, ձեռքբերումների, անելիքների վերաբերյալ:

2.12. Սովորողների լեզվական կարողությունների ու հմտությունների զարգացման ընթացքը գնահատվում է «Գնահատման քաղաքականություն» փաստաթղթի պահանջներին համապատասխան (բառային բնութագրիչներ, միավորներ, թղթապանակներ և այլն):

### **Այսպիսով, լեզվի ուսուցումը.**

- հենվում է միջառարկայական մոտեցման վրա
- ներառվում է հետազոտական ծրագրի մեջ
- զարգացնում է լսելու, խոսելու, գրելու, կարդալու կարողությունները և համակարգչային գրագիտությունը
- կապ է ստեղծում լսելու, խոսելու, գրելու, կարդալու կարողությունների միջև
- հնարավորություն է ստեղծում այլ լեզուների ուսուցման համար:

### **3. Մայրենի լեզվի ուսուցումը**

3.1. Ուսուցման լեզուն հայերենն է: Համոզված ենք, որ մայրենի լեզվի լավ իմացությունը նպաստում է այլ լեզուների հաջող յուրացմանը, դրանց բառապաշարային ու կառուցվածքային ընդհանրությունների ու տարբերությունների ընկալմանը, ինչպես նաև մայրենի լեզվի ուսուցումից ստացած հաղորդակցական կարողությունները այլ լեզուների ուսումնասիրման ժամանակ կիրառելուն:

### **4. Օտարազգի սաների մայրենի լեզվի խթանումը**

4.1. Այն երեխաների համար, ում մայրենի լեզուն հայերենը չէ, դպրոցը պատասխանատվություն է ստանձնում անհատական կամ խմբային աշխատանքի միջոցով օժանդակելու նրանց մայրենի լեզվի զարգացմանը:

4.2. Դպրոցը պատրաստ է դիմելու ՀՀ-ում գործող դեսպանատներին, կրթական տարբեր հաստատությունների, անկախ մասնագետների՝ օտարազգի սաներին իրենց մայրենի լեզուն դասավանդելու հրավերով:

4.3. Օտարախոս սովորողների համար կազմվում են հայերենի ուսուցման անհատական ծրագրեր:

4.4. Դպրոցը պարտավորվում է նաև գրադարանը պարբերաբար հարստացնել տարբեր լեզուների գրքերով, ֆիլմերով, ձայնագրություններով՝ օտարազգի սաների համար իրենց մայրենի լեզվին ու ազգային մշակույթին հաղորդակից լինելու հնարավորություն ստեղծելով:

## **5. Այլ լեզուների ուսուցումը**

5.1. Ուսումնասիրվող մյուս լեզուներն են ռուսերենը, անգլերենը կամ ֆրանսերենը (պարտադիր), իտալերենը և գերմաներենը (լրացուցիչ): Ծնողի և սանի ցանկության դեպքում կարող են ուսուցանվել նաև այլ լեզուներ:

5.2. Ռուսերենի և օտար լեզուների ուսուցիչները ավագ մանկավարժների և դասավանդող մյուս ուսուցիչների հետ միասին իրականացնում են աշխատանքի համատեղ պլանավորում և վերլուծություն:

5.3. Լեզվի ուսուցիչներն օժանդակում են սովորողների լեզվական կարողությունների զարգացմանը, խթանում նրանց մեջ ՄԲ սովորողի որակների ձևավորումը, աշխատում են նրանց մեջ PYP հիմնական տարրերի զարգացման ուղղությամբ:

5.4. Դասավանդվող բոլոր լեզուներն ինտեգրված են վերառարկայական թեմաների ուսումնասիրման գործընթացում և երեխաների համար լայն հնարավորություններ են ստեղծում օգտվելու այդ լեզուներով առկա գրականությունից:

## **6. Հատուկ կարիքներ կամ աջակցություն**

6.1. Լոգոպեդական ծառայությունը հետազոտական աշխատանքներ է իրականացնում դպրոցի բոլոր սաների շրջանում՝ բացահայտելով նրանց բանավոր և գրավոր խոսքում առկա խնդիրները, խանգարումները:

6.2. Ծնողի համաձայնությամբ և մանկավարժի գիտությամբ պլանավորվում է սանի անհատական աշխատանք լոգոպեդի հետ, որը տևում է մինչև առկա խնդիրների վերացումը:

6.3. Լոգոպեդի հետ իրականացվող աշխատանքի ընթացքում մասամբ կամ ամբողջությամբ դադարեցվում է սովորողի լեզվական գիտելիքների միավորային գնահատումը: Անհրաժեշտության դեպքում սանի վերոհիշյալ աշխատանքները գնահատվում են լոգոպեդի հետ համատեղ:

6.4. Յուրաքանչյուր սանի հետ իրականացվող աշխատանքի ողջ ընթացքում լոգոպեդը սերտորեն համագործակցում է խմբի ավագ մանկավարժի, հոգեբանի և դասավանդող բոլոր ուսուցիչների հետ:

## **7. Գրադարանի դերը**

7.1. Գրադարանավարը սերտորեն համագործակցում է ուսուցիչների, սովորողների և մանկավարժական առաջնորդության հետ՝ ապահովելով լեզվի զարգացման համար անհրաժեշտ ծրագրային և աջակցող նյութերը:

- 7.2. Գրադարանում կան տպագիր և էլեկտրոնային գրքեր, սկավառակներ, պաստառներ, ձայնագրություններ տարբեր լեզուներով:
- 7.3. Ռեսուրսները հասանելի են ուսուցիչների, սովորողների և ծնողների համար:
- 7.4. Բոլոր տարիքային խմբերի համար առկա է հաստատված ժամանակացույց գրադարան հաճախելու, գրքեր փոխանակելու, կարդացած գրքերը և տեսաֆիլմերը քննարկելու համար:

## **8. Կազմակերպչական աշխատանք**

- 8.1. «Լեզվի ուսուցման քաղաքականություն» փաստաթուղթը տեղադրվում է Ճեմարանի կայքէջում և հասանելի է ողջ համայնքին:
- 8.2. Դպրոցի տնօրենությունը, ՄԲ ԿԴ ծրագրի համակարգողը և ուսուցիչները պատասխանատու են լեզվական քաղաքականության իրականացման համար:
- 8.3. «Լեզվի ուսուցման քաղաքականություն» փաստաթուղթը վերանայվում է երկու տարին մեկ անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության, դպրոցի ուսումնական համայնքի կողմից:

## Աղբյուրներ.

- Guidelines for developing a school language policy, IBO, 2006.
- Learning in a language other than mother tongue in IB programmes.
- PYP Language Scope and Sequence, IBO, Feb., 2009.
- PYP Coordinator Handbook 07/08, IBO, 2011-12.
- From Principles to Practice, IBO, 2018.
- ՀՀ Օրենքը լեզվի մասին, 2011:
- Հանրակրթության պետական չափորոշիչ, 2011:
- Հայոց լեզվի և գրականության չափորոշիչ և ծրագրեր, 2011:
- The Common European Framework of Reference for Languages, Council of Europe, [http://www.coe.int/t/dg4/linguistic/Source/Framework\\_EN.pdf](http://www.coe.int/t/dg4/linguistic/Source/Framework_EN.pdf)